Քաղաքացի Ալեքսան Միշայի Աբրահամյանին ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Շիրվանզադե փողոցի N 2 հասցեի բնակելի տան օրինական հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցված է 71.05 (յոթանասունմեկ ամբողջ հինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները, ինքնակամ բացված է 2 (երկու) դուռ, ինքնակամ դռան է ձևափոխված 1 (մեկ) պատուհան և օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 314.14 (երեք հարյուր տասնչորս ամբողջ տասնչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով սահմանազատված հողամաս, որի վրա առկա շինությունները կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, որոնք հաշվառված են Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում N 2023PZRLMK և N 2023GE3B9T ծածկագրերով:

Քաղաքացի Ալեքսան Միշայի Աբրահամյանի կողմից լիազորված անձ Հակոբ Զիրոյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին նշված հողամասի և շինությունների նկատմամբ Ալեքսան Միշայի Աբրահամյանի սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ հոդվածով, 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1-րդ կետի, 8.1 կետի, 18-րդ կետի դ ենթակետի և հիմք ընդունելով քաղաքացի Ալեքսան Միշայի Աբրահամյանի կողմից լիազորված անձ Հակոբ Զիրոյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի սեպտեմբերի 28-ին N 20538 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

- Քաղաքացի Ալեքսան Միշայի Աբրահամյանին ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Շիրվանզադե փողոցի N 2 հասցեի բնակելի տան օրինական հողամասում ինքնակամ կառուցված 71.05 (յոթանասունմեկ ամբողջ հինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները, ինքնակամ բացված է 2 (երկու) դուռը, ինքնակամ դռան ձևափոխված 1 (մեկ) պատուհանը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 5907 (հինգ հազար ինը հարյուր յոթ) Հայաստանի Հանրապետության դրամ
- Ճանաչել քաղաքացի Ալեքսան Միշայի Աբրահամյանի (ծնված 1957 թվականի նոյեմբերի 01-ին) սեփականության իրավունքը՝ ժառանգության իրավունքով իրեն պատկանող, Գյումրի քաղաքի Շիրվանզադե փողոցի N 2 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից, ավել օգտագործվող 249.55 (երկու հարյուր քառասունինն ամբողջ հիսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով սահմանազատված հողամասի և նրա վրա առկա շինությունների նկատմամբ:

3. Ալեքսան Միշայի Աբրահամյանին ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Շիրվանզադե փողոցի N 2 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից, ավել օգտագործվող 64.59 (վաթսունչորս ամբողջ հիսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով սահմանազատված հողամասը և նրա վրա առկա 6.7 (վեց ամբողջ յոթ տասնորդական) քառակուսի մետր ընդհանուր մակերեսով պարիսպը և պատշգամբը թողնել ինքնակամ:
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Ալեքսան Միշայի Աբրահամյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից::

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024թ. ք.Գյումրի



27.02.2024

X 



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 24 » փետրվարի 2024 թվականի N 583 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՋԳԵՆ
ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑ N 19/1 ՀԱՍՑԵԻ 400,0 ՔԱՌԱԿՈՒՄԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Վազգեն Սարգսյան փողոց 19/1 հասցեի 400,0 (չորս հարյուր) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում ներառված Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 22-ի N 124-Ա որոշմամբ հաստատված Գյումրի քաղաքի գլխավոր հատակագծի հեռանկարային զարգացման գծագրով հանդիսանում է բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս: Սակայն Գյումրի քաղաքի Վազգեն Սարգսյան փողոց 19/1 հասցեի 400,0 (չորս հարյուր) քառակուսի մետր մակերեսով հողամասը պետական գրանցում է ստացել որպես՝ բնակավայրերի նպատակային նշանակության խառը կառուցապատման գործառնական նշանակության հողամաս (հիմք՝անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 30072020-08-0025 վկայականը): Նշված տարածքում կառուցապատում իրականացնելու նպատակով կարիք է առաջացել փոփոխել նշված հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Վազգեն Սարգսյան փողոց 19/1 հասցեի 400,0 (չորս հարյուր) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատում գործառնական նշանակությունից փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատում գործառնական նշանակության:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2024 թ. ք. Գյումրի



27.02.2024

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 24 » փետրվարի 2024 թվականի N 582 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2014
ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅՄԲԵՐԻ 11-Ի N 2309-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով, նկատի ունենալով, որ հողամասը չի օգտագործվում ըստ նպատակային նշանակության, հաշվի առնելով քաղաքացի Սամվել Հակոբյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի դեկտեմբերի 14-ին N 26945 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

- Ուժը կորցրած ճանաչել 2014 թվականի նոյեմբերի 11-ի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի «Քաղաքացի Սամվել Հակոբյանին ժամանակավոր մետաղական ավտոտնակ տեղադրելու նպատակով Գյումրի համայնքին պատկանող Շչերքինայի փողոց N 6/2 հասցեի 19,95 քառակուսի մետր մակերեսով հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին» N 2304-Ա որոշումը:
- Լուծել համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին 2014 թվականի դեկտեմբերի 04-ի (գրանցված սեղանամատյանում N 9839) պայմանագիրը:
- Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Շիրակի մարզային ստորաբաժանում՝ N 15012015-08-0010 վկայականը չեղարկելու համար:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Սամվել Հակոբյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2024 թ. ք. Գյումրի

X 

Վ.ՍԱՄՎԵԼՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 27 » *Փետրվար* 2024 թվականի N 581-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍԱՀՄԱՆԱՊԱՀՆԵՐԻ
ՓՈՂՈՑԻ N 2/1 ՀԱՍՑԵԻ 2500.0 ՔԱՌԱԿՈՒՄԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Սահմանապահների փողոցի N 2/1 հասցեի 2500.0 (երկու հազար հինգ հարյուր) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի, ներառված է բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողերի ցանկում:

Նշված տարածքում կառուցապատում իրականացնելու նպատակով կարիք է առաջացել փոփոխելու հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

- Գյումրի քաղաքի Սահմանապահների փողոցի N 2/1 հասցեի 2500.0 (երկու հազար հինգ հարյուր) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակությունից փոփոխել հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2024թ. ք.Գյումրի



Կ. ՍԱՄՍՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 27 » փետրվարի 2024 թվականի N 580-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ
ՕԳՈՍՏՈՍԻ 08-Ի N 2005-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 08-ի N 2005-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափազրական նյութերում տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 17/01/2024 թվականի N Կ-17012024-08-0142 որոշում): Ներկայացվել է նոր ճշտգրված չափազորություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 08-ի <<Քաղաքացիներ Էդվարդ Ալբերտի Աղեկյանին, Էդգար Էդվարդի Աղեկյանին, Սիրանուշ Էդուարդի Հովհաննիսյանին և Արաքսյան Հակոբի Ղևոնդյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ղուկասյան փողոց N 161/2 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 77,14 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակը օրինական ճանաչելու մասին>> N 2005-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) վերնագրում, նախաբանում, որոշման 1-ին կետում <<77,14 (յոթանասուներեք ամբողջ տասնչորս հարյուրերորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<74,25(յոթանասուներեք ամբողջ քսանհինգ հարյուրերորդական)>> թվով և բառերով.

2) նախաբանում <<2023FL3BS>> թիվը փոխարինել <<2023FWL3BS>> թվով.

3) նախաբանում << 22 կետի >> թվից և բառից հետո լրացնել <<2-րդ կետի գ) ենթակետի>> թվերը և բառերը.

4) որոշման 1-ին կետում <<178656(մեկ հարյուր յոթանասուներեք հազար վեց հարյուր հիսունվեց)>> թիվը և բառերը փոխարինել <<171963(մեկ հարյուր յոթանասունմեկ հազար ինը հարյուր վաթսուներեք)>> թվով և բառերով.

5) որոշման 1-ին կետում <<դրամ>> բառից հետո լրացնել <<2,89 (երկու ամբողջ ութսունինը հարյուրերորդական) >> քառակուսի մետր մակերեսով շինությունները թողնել ինքնակամ, քանի որ օրենքով նախատեսված ժամկետներում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով չեն հաշվառվել:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի
2024 թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 27 » փետրվարի 2024 թվականի N 579-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԳԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի N 383-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 3-րդ մասի, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթներով.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի փետրվարի 9-ի << Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ներհամայնքային թիվ 18 միկրոավտոբուսային երթուղու սպասարկման իրավունքը <<Գյումրու Ավտոբուս>> փակ բաժնետիրական ընկերությանը ժամանակավորապես վերապահելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2020 թվականի հուլիսի 24-ի N 1231-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 383-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները.

1) որոշման 1-ի, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

<< 1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ներհամայնքային թիվ 18 միկրոավտոբուսային երթուղում՝ (այսուհետ երթուղի) կանոնավոր փոխադրումների սպասարկման իրավունքը տրամադրել <<Գյումրու ավտոբուս>> ՓԲԸ-ին

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2020 թվականի հուլիսի 24-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ներհամայնքային երթուղիների ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումների իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթային հանձնաժողովի 2020 թվականի հուլիսի 24-ի թիվ 40 արձանագրությունը հաստատելու մասին>> N 1231-Ա որոշումը:

3. Երթուղու կանոնավոր փոխադրումների իրականացման համար ներգրավվել թվով 4 միավոր միկրոավտոբուսներ՝ համաձայն հավելվածի:

4. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի տրանսպորտի բաժնի պետի ծառայողական պարտականությունները կատարող Գ. Ավետիսյանին՝
- 1) սույն որոշման հավելվածով՝ սահմանված տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշերի փոխարեն ժամանակավոր դեղին հիմնագրային համարանիշեր և ճանապարհային ոստիկանության կողմից սահմանված ձևի ժամանակավոր հաշվառման կտրոններ տրամադրելու նպատակով դիմել ՀՀ ոստիկանության <<Ճանապարհային ոստիկանության >> ԳՀԲ հյուսիսային կենտրոն:
 - 2) սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գյումրու ավտոբուս ՓԲԸ-ի տնօրեն Ռ. Անդրիասյանին պատշաճ իրազեկելու օրվա հաջորդող օրվանից: >>

2) որոշումը լրացնել հավելվածով՝ համաձայն հավելվածի:

2024թ.
Ք.Գյումրի



Վ. Սամսոնյան



Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի
<< 27 >> 02 2024թ. N 532 որոշման

<< Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի
<< 09 >> 02 2024թ. N 383-Ա որոշման

N	Մակնիշ	պետհամարանիշ	տարեթիվ
1.	ԳԱԶ-A65R33 - 60	725 CZ 61	2024թ.
2.	ԳԱԶ-A65R33 - 60	728 CZ 61	2024թ.
3.	ԳԱԶ-A65R33 - 60	730 CZ 61	2024թ.
4.	ԳԱԶ-A65R33 - 60	731 CZ 61	2024թ.

>>



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 27 » *հոկտեմբեր* 2024 թվականի N 578-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԳԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի N 382-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 3-րդ մասի, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթներով.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի փետրվարի 9-ի << Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ներհամայնքային թիվ 14 միկրոավտոբուսային երթուղու սպասարկման իրավունքը <<Գյումրու Ավտոբուս>> փակ բաժնետիրական ընկերությանը ժամանակավորապես վերապահելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2020 թվականի հուլիսի 15-ի N 1237-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 382-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները.

1) որոշման 1-ի, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

<< 1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ներհամայնքային թիվ 14 միկրոավտոբուսային երթուղում՝ (այսուհետ երթուղի) կանոնավոր փոխադրումների սպասարկման իրավունքը տրամադրել <<Գյումրու ավտոբուս>> ՓԲԸ-ին

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2020 թվականի հուլիսի 15-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ներհամայնքային երթուղիների ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթային հանձնաժողովի 2020 թվականի հուլիսի 15-ի թիվ 37 արձանագրությունը հաստատելու մասին>> N 1237-Ա որոշումը:

3. Երթուղու կանոնավոր փոխադրումների իրականացման համար ներգրավվել թվով 4 միավոր միկրոավտոբուսներ՝ համաձայն հավելվածի:

4. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի տրանսպորտի բաժնի պետի ծառայողական պարտականությունները կատարող Գ. Ավետիսյանին՝

- 1) սույն որոշման հավելվածով սահմանված տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշերի փոխարեն ժամանակավոր դեղին հիմնագույնի համարանիշեր և ճանապարհային ոստիկանության կողմից սահմանված ձևի ժամանակավոր հաշվառման կտրոններ տրամադրելու նպատակով դիմել ՀՀ ոստիկանության <<Ճանապարհային ոստիկանության >> ԳՀՔ հյուսիսային կենտրոն:
- 2) սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գյումրու ավտոբուս ՓԲԸ-ի տնօրեն Ռ. Անդրիասյանին պատշաճ իրազեկելու օրվա հաջորդող օրվանից: >>

2)որոշումը լրացնել հավելվածով՝ համաձայն հավելվածի:

2024թ.
Ք. Գյումրի



Վ. Սամսոնյան

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի
<< 24 >> 02 2024թ. N 382-Ա որոշման

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի
<< 09 >> 02 2024թ. N 382-Ա որոշման

N	Մակնիշ	պետհամարանիշ	տարեթիվ
1.	ԳԱԶ-A65R33 - 60	721 CZ 61	2024թ.
2.	ԳԱԶ-A65R33 - 60	722 CZ 61	2024թ.
3.	ԳԱԶ-A65R33 - 60	723 CZ 61	2024թ.
4.	ԳԱԶ-A65R33 - 60	724 CZ 61	2024թ.

>>



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 27 » փետրվարի 2024 թվականի N 577Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ՀՀՄԳՀՀԿՀ-ԳՀԾՁԲ-02/24» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԹԱՓԱՌՈՂ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՍՏԵՐԻԼԻԶԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետով, 6-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ, 8-րդ կետի 3-րդ ենթակետով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար «ՀՀՄԳՀՀԿՀ-ԳՀԾՁԲ-02/24» ծածկագրով գնանշման հարցման միջոցով թափառող կենդանիների ստերիլիզացիայի ծառայության ձեռքբերման նպատակով կազմավորել հայտերը գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝

- 1) Մենուա Մկրտչյան - համայնքի ղեկավարի խորհրդական,

Հանձնաժողովի անդամներ՝

- 2) Լևոն Բարսեղյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի պաշտոնակատար,
- 3) Խաչատուր Սուլթանյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի գլխավոր մասնագետ,
- 4) Օլգա Գևորգյան - Գյումրու համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջին կարգի մասնագետ,
- 5) Մանե Վարդանյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ:

Հանձնաժողովի քարտուղար՝

- 6) Արմինե Սարգսյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:



2024թ. ք. Գյումրի

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 27 » *փետրվարի* 2024 թվականի N 576-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԾՁԲ-02/24» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԹԱՓԱՌՈՂ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՍՏԵՐԻԼԻԶԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի «ա» և «բ» պարբերություններով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԾՁԲ-02/24» ծածկագրով գնանշման հարցման միջոցով թափառող կենդանիների ստերիլիզացիայի ծառայության ձեռքբերման նպատակով պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով՝

1) ստորաբաժանման ղեկավար՝

Արտավազդ Ոսկանյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Գյումրու կոմունալ ծառայություն» ՀԲՀ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

2) ստորաբաժանման աշխատակից՝

ա. Արման Սարգսյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Գյումրու կոմունալ ծառայություն» ՀԲՀ-ի բրիգադիր,

2. գնումների համակարգող՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Արմինե Սարգսյան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:



X *Արման Սարգսյան*

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024թ. ք. Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 27 » փետրվարի 2024 թվականի N 575-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԽԱՉԱՏՈՒՐ ՄԻՇԱՅԻ ՍԱՐԻՔԵԼՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ
ՔԱՂԱՔԻ ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑԻ 5-ՐԴ ԱՆՑՈՒՄԻ N 7 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ
ԿԱՌՈՒՑՎԱԾ 16.07 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՆԱՎԱՐՏ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ, ԻՆՔՆԱԿԱՄ
ԲԱՑՎԱԾ 2 ԲԱՑՎԱԾՔԸ, ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾՔԻ ՁԵՎԱՓՈԽՎԱԾ 1 ԴՈՒՌԸ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ՓԱԿՎԱԾ 1 ՊԱՏՈՒՀԱՆՆ
ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Խաչատուր Միշայի Սարիքելյանին ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Կարեն Դեմիրճյան փողոցի 5-րդ անցումի N 7 հասցեի տան հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ն ինքնական կառուցված է 16.07 (տասնվեց ամբողջ յոթ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով անավարտ օժանդակ շինություն, ինքնական բացված է 2 (երկու) բացվածք, ինքնական բացվածքի է ձևափոխված 1 (մեկ) դուռ, ինքնական փակված է 1 (մեկ) պատուհան, որոնք հաշվառված են Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում N 2023SBLLL3 ծածկագրով:

Քաղաքացի Խաչատուր Միշայի Սարիքելյանի կողմից լիազորված անձ Տիգրան Պապոյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին նշված շինությունն օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8.1 կետի, 18-րդ կետի դ ենթակետի, 22.1-րդ կետի և հիմք ընդունելով քաղաքացի Խաչատուր Միշայի Սարիքելյանի կողմից լիազորված անձ Տիգրան Պապոյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի սեպտեմբերի 27-ին N 20458 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

- Քաղաքացի Խաչատուր Միշայի Սարիքելյանին ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Կարեն Դեմիրճյան փողոցի 5-րդ անցումի N 7 հասցեի տան հողամասում ինքնական կառուցված 16.07 (տասնվեց ամբողջ յոթ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով անավարտ օժանդակ շինությունը, ինքնական բացված 2 (երկու) բացվածքը, ինքնական բացվածքի ձևափոխված 1 (մեկ) դուռը, ինքնական փակված 1 (մեկ) պատուհանը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 10900 (տասը հազար ինը հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ:
- Օրինականացման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60 օրվա ընթացքում չվճարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
- Օրենքով սահմանված կարգով քաղաքացի Խաչատուր Միշայի Սարիքելյանին տրամադրել անավարտ օժանդակ շինությունն ավարտին հասցնելու համար ճարտարապետահատակագծային առաջադրանք անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման և շինարարությունն ավարտելու ժամկետների վերաբերյալ տվյալներով:
- Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Խաչատուր Միշայի Սարիքելյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2024թ. ք. Գյումրի

x

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 27 » փետրվարի 2024 թվականի N 574-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑԻ 5-ՐԴ ԱՆՑՈՒՄԻ N 7 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ 78.1 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 37.62 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ 30.55 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Խաչատուր Միշայի Սարիբեկյանին ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Կարեն Դեմիրճյան փողոցի 5-րդ անցումի N 7 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից 78.1 (յոթանասունութ ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցվել է 37.62 (երեսունյոթ ամբողջ վաթսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին 30.55 (երեսուն ամբողջ հիսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով ավտոտնակ, որը տիրապետում և օգտագործում է քաղաքացի Խաչատուր Միշայի Սարիբեկյանը:

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի և հիմք ընդունելով շինությունը Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող տեղեկանքը N 2023JYNAVZ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

- Գյումրի քաղաքի Կարեն Դեմիրճյան փողոցի 5-րդ անցումի N 7 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից 78.1 (յոթանասունութ ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասը և նրա վրա ինքնակամ կառուցված 37.62 (երեսունյոթ ամբողջ վաթսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին 30.55 (երեսուն ամբողջ հիսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով ավտոտնակը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
- Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել քաղաքացի Խաչատուր Միշայի Սարիբեկյանին:
- Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
- Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2024թ. ք.Գյումրի

X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 27 » փետրվարի 2024 թվականի N 513-Ն

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՇՈՏ ՀՈՎՍԵՓԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՊՈՌՇՅԱՆ ՓՈՂՈՑ 55
ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 217.09 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Աշոտ Հովսեփի Գրիգորյանին պատկանող Գյումրի քաղաքի Պոռշյան փողոց 55 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված են 217.09(երկու հարյուր տասնյոթ ամբողջ ինը հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով շինություններ (որից 229.46 (երկու հարյուր քսանինը ամբողջ քառասունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (196.84(հարյուր ինսունվեց ամբողջ ութսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով կիսակառույց):

Քաղաքացի Աշոտ Հովսեփի Գրիգորյանի լիազորված անձ Ռուզաննա Սողոյանը դիմել է նշված շինություններն օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերագրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, հաշվի առնելով որ շինությունը չի գտնվում մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, հաշվի առնելով որ շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, կառույցի պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2023RHTR9U ծածկագիրը, քաղաքացի Աշոտ Հովսեփի Գրիգորյանի լիազորված անձ Ռուզաննա Սողոյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականին N24951 թվագրմամբ):

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Քաղաքացի Աշոտ Հովսեփի Գրիգորյանին պատկանող Գյումրի քաղաքի Պոռշյան փողոց 55 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 217.09(երկու հարյուր տասնյոթ ամբողջ ինը հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով շինությունները (որից 229.46 (երկու հարյուր քսանինը ամբողջ քառասունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (196.84(հարյուր ինսունվեց ամբողջ ութսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով կիսակառույց) ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 625279 (վեց հարյուր քսանհինգ հազար երկու հարյուր յոթանասունինը) Հայաստանի Հանրապետության դրամ:

2.Օրինականացման վերաբերյալ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարների՝ 60 օրյա ժամկետում չվճարման դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

3. Սահմանված կարգով քաղաքացի Աշոտ Հովսեփի Գրիգորյանին տրամադրել անավարտ շինությունը ավարտին հասցնելու համար ճարտարապետահատակագծային առաջադրանք անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման և շինարարություն ավարտելու ժամկետների վերաբերյալ տվյալներով:

4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենքով սահմանված կարգով:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 26 » փետրվարի 2024 թվականի N 542-Ա

<<ԿԱՐԱՍ ԳՐՈՒՊ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽՆԱՏԱՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳՈՐԿՈՒ 62 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ
ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի
1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Գյումրի
համայնքի ավագանու 2013թ. նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված
կանոնների դրույթներով և, հիմք ընդունելով <<Կարաս Գրուպ>> ՍՊԸ-ի 2024
թվականի փետրվարի 21-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում
մուտքագրված 2024 թվականի փետրվարի 23-ին 3645 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

- Թույլատրել <<Կարաս Գրուպ>> ՍՊԸ-ին Գյումրի քաղաքի Գորկու 62
հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լուսատախտակ)
ընդհանուր 12,4 քմ մակերեսով:
- Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2024 թվականի մարտի
01- ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը :
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Կարաս Գրուպ>> ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա.
Հարությունյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:



ՂԵԿԱՎԱՐ՝

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 26 » փետրվարի 2024 թվականի N 571-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԳՈՒՐԳԵՆ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՐԱԳԱԾ 14 ՀԱՍՑԵՈՒՄ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ
ԻՐԵՐԻ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի N 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Գուրգեն Մկրտչյանի (ՀՎՀՀ՝ 57256362, հաշվառման ամսաթիվը՝ 19.03.2008 թ.) 2024 թվականի փետրվարի 22-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի փետրվարի 22-ին 3614-2024 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

- Թույլատրել անհատ ձեռնարկատեր Գուրգեն Մկրտչյանին Գյումրի քաղաքի Արագած 14 հասցեում իրականացնել թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առք ու վաճառք:
- Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Գուրգեն Մկրտչյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:



26.02.2024

Վ. ՎԱՄԱՆՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 26 » փետրվարի 2024 թվականի N 570-Ա

ԱՆՀԱՏ ԶԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐԹՈՒՐ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ
ԱՐԱԳԱԾ 5 ՀԱՍՑԵՈՒՄ ԹԱՆԿԱՐԺՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ

ԻՐԵՐԻ ՄԱՆՐԱԾԱՆ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի N 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Արթուր Պետրոսյանի (ՀՎՀՀ՝ 57285919, հաշվառման ամսաթիվ՝ 13.03.2013 թ.) 2024 թվականի փետրվարի 22-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի փետրվարի 22-ին 3613-2024 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

- Թույլատրել անհատ ձեռնարկատեր Արթուր Պետրոսյանին Գյումրի քաղաքի Արագած 5 հասցեում իրականացնել թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առք ու վաճառք:
- Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Արթուր Պետրոսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:



Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Գաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 26 » *Փետրվարի* 2024 թվականի N 569-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԿԱՐԵՆ ՄՈՒՐԱՊՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ
ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ 1/10 ՀԱՍՑԵՈՒՄ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ
ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի N 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Կարեն Մուրադյանի (ՀՎՀՀ՝ 57285858, հաշվառման ամսաթիվը՝ 12.03.2012) 2024 թվականի փետրվարի 14-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի փետրվարի 14-ին 2844-2024 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

- Թույլատրել անհատ ձեռնարկատեր Կարեն Մուրադյանին Գյումրի քաղաքի Սայաթ-Նովա 1/10 հասցեում իրականացնել թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առք ու վաճառք:
- Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Կարեն Մուրադյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:



Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք.Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gymri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 26 » ֆեբրվարի 2024 թվականի N 568-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՌՈՒՍԼԱՆ ԱՍՈՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ
ԱՐԱԳԱԾ 14 ՀԱՍՑԵՈՒՄ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ
ԻՐԵՐԻ ՄԱՆՐԱԾԱՆ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Ռուսլան Ասոյանի (<ՎՀՀ՝ 57256708, հաշվառման ամսաթիվը՝ 03.04.2008 թ.) 2024 թվականի հունվարի 30-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի հունվարի 30-ին 1823-2024 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

- Թույլատրել անհատ ձեռնարկատեր Ռուսլան Ասոյանին Գյումրի քաղաքի Արագած 14 հասցեում իրականացնել թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրաձախ առք ու վաճառք:
- Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Ռուսլան Ասոյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

x 
Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ



2024 թ. ք. Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«26» փետրվարի 2024 թվականի N 567-Ա

«ԿԱՐԱՏ ԹԻԵՅԴ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐՇԱԿ ՔՈՍՅԱՆԻՆ ԱՐՈՎՅԱՆ 218/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 09-Ի N 394-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 38.1-ին հոդվածի դրույթներով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի N 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով «Կարատ Թրեյդ» ՍՊԸ-ի տնօրեն Արշակ Քոսյանի (ՀՎՀՀ՝ 02874778, գրանցման ամսաթիվը՝ 19.09.2022 թ.) 2024 թվականի հունվարի 31-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի հունվարի 31-ին 1924-2024 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

- Թույլատրել «Կարատ Թրեյդ» ՍՊԸ-ի տնօրեն Գյումրի քաղաքի Արովյան 218/1 հասցեում իրականացնել ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների վաճառք:
- Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը:
- Չեղյալ ճանաչել ՀՀ ՇՄ Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի փետրվարի 09-ի «Կարատ Թրեյդ» ՍՊԸ-ի տնօրեն Արշակ Քոսյանին Արովյան 218/1 հասցեում ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների վաճառքի թույլտվություն տալու մասին» N 394-Ա որոշումը:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Կարատ Թրեյդ» ՍՊԸ-ի տնօրեն Արշակ Քոսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

X 



Վ. ՄԱՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 26 » փետրվարի 2024 թվականի N 566-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ 1-ԻՆ ԹԱՂԱՄԱՍ N 76/5 ՀԱՍՑԵՆԻ ՎԱՅՈՒՆՈՒՄԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (70.74 ՔԱՌԱԿՈՒՄԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ, 257.5 ՔԱՌԱԿՈՒՄԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՌՈԲԵՐՏ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ, ԳՈՀԱՐԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ, ՄՈՆԻԿԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԵՎ ՂԱՎԻԹ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

